ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«28» հուլիս 2020թ. No 2515 - Ա

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ «ՊԵՐԴԱՄԱՆ ՖԱՐՄԱՍՅՈՒՏԻԿԱԼՍ ՊՎՏ. ՍՊԸ, Գ/5 և Գ/6 ԳՈՐՎԱ Բ.Ի.Դ.Ս., Ք. ՎԱԴՈԴԱՐԱ-390 016, ՄԱՍՆ. ՎԱԴՈԴԱՐԱ, ՊԵՐԴԱՄԱՆ ՖԱՐՄԱՍՅՈՒՏԻԿԱԼՍ ՊՎՏ. ՍՊԸ, ԼԵՎԵԼ-11, Ա-111, ՀԻՄԱԼԱՅԱ ՀԱՈՒՍ, ԿԳ ՄԱՐԳ, ՔԱՆՆՈԹ ՓԼԵՅՍ, ՆՅՈՒ ԴԵԼԻ – 110001 (ՀՆԴԿԱՍՏԱՆ)-Ի ՀԱՄԱՐ» ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ «ԴԻԱՄԱՐ-Մ, ՄԵՏՖՈՐՄԻՆ (ՄԵՏՖՈՐՄԻՆԻ ՀԻԴՐՈՔԼՈՐԻԴ), ԳԼԻՄԵՊԻՐԻԴ, ԴԵՂԱՀԱՏԵՐ, 500ՄԳ+2ՄԳ; (100/10X10/) ԲԼԻՍՏԵՐՈՒՄ», «ԴԻԱՄԵՏ Ֆ, ՄԵՏՖՈՐՄԻՆ (ՄԵՏՖՈՐՄԻՆԻ ՀԻԴՐՈՔԼՈՐԻԴ), ԴԵՂԱՀԱՏԵՐ ԹԱՂԱՆԹԱՊԱՏ, 1000ՄԳ; (100/10X10/) ԵՎ (150/15X10/) ԲԼԻՍՏԵՐՈՒՄ» ԵՎ «ԴԻԱԶՈՆ-ՄՌ 60ՄԳ, ԳԼԻԿԼԱԶԻԴ, ԴԵՂԱՀԱՏԵՐ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՁԵՐԲԱԶԱՏՄԱՄԲ, 60ՄԳ; (100/10X10/) ԲԼԻՍՏԵՐՈՒՄ» ԴԵՂԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընդհանուր բաժին
№ 1628
29 JUL 2020
Կից ☐ Նշում

Լսեվ. 29.07.20

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 31-րդ մասի 3-րդ կետը, 23-րդ հոդվածի 2-րդ մասը, Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-«Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը, «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի 2020 թվականի հուլիսի 17-ի թիվ 17254, թիվ 17255, թիվ 17256 անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման վերաբերյալ փորձագիտական եզրակացությունները, «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲ ընկերության ս/թ հուլիսի 17-ի թիվ 0103121420 գրությունը՝ Պերդաման ֆարմասյուտիկալս Պվտ. ՍՊԸ, Հնդկաստան ընկերության կողմից ներկայացված գրությունն այն մասին, որ Պերդաման ֆարմասյուտիկալս Պվտ. ՍՊԸ, Գ/5 և Գ/6 Գորվա Բ.Ի.Դ.Ս., ք. Վադոդարա-390 016, մասն. Բադոդարա ընկերության արտադրատարածքում հրաժարվել է ընդունել «Դեղերի մասին» օրենքով սահմանված ՊԱԳ համապատասխանության դիտարկում՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Կասեցնել Հնդկաստանի «Պերդաման Ֆարմասյուտիկալս Պվտ. ՍՊԸ, Գ/5 և Գ/6 Գորվա Բ.Ի.Դ.Ս., ք. Վադոդարա-390 016, մասն. Վադոդարա, Պերդաման Ֆարմասյուտիկալս Պվտ. ՍՊԸ, Լեվել-11, Ա-111, Հիմալայա Հաուս, ԿԳ Մարգ, Քաննոթ Փլեյս, Նյու Դելի – 110001 (Հնդկաստան)-ի համար» դեղագործական ընկերության արտադրության «ԴիաՄար-Մ, մետֆորմին (մետֆորմինի հիդրոքլորիդ), գլիմեպիրիդ, դեղահատեր, 500մգ+2մգ; (100/10x10/) բլիստերում», «ԴիաՄետ Ֆ, մետֆորմին (մետֆորմինի հիդրոքլորիդ), դեղահատեր թաղանթապատ, 1000մգ; (100/10x10/) և (150/15x10/) բլիստերում» և «ԴիաԶոն-ՄՌ 60մգ, գլիկլազիդ, դեղահատեր կարգավորվող ձերբազատմամբ, 60մգ; (100/10x10/) բլիստերում» դեղերի գրանցումը Հայաստանի Հանրապետությունում՝ մինչև խախտումների կամ անհամապատասխանությունների վերացումը:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝

1) ապահովել մասնագիտական և պաշտոնական զանգվածային լրատվության միջոցներում համապատասխան տեղեկատվության հրապարակումը:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Զարուհի Դարբինյանին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի տրամադրումը ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ին, գրանցման հավաստագրի իրավատիրոջը, Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին, դեղերի շրջանառության սուբյեկտներին:

4. ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Վիլեն Գաբրիելյանին՝ ապահովել դեղերի գրանցամատյանում Հնդկաստանի «Պերդաման Ֆարմասյուտիկալս Պվտ. ՍՊԸ, Գ/5 և Գ/6 Գորվա Բ.Ի.Դ.Ս., ք. Վադոդարա-390 016, մասն. Վադոդարա, Պերդաման Ֆարմասյուտիկալս Պվտ. ՍՊԸ, Լեվել-11, Ա-111, Հիմալայա Հաուս, ԿԳ Մարգ, Քաննոթ Փլեյս, Նյու Դելի – 110001 (Հնդկաստան)-ի համար» դեղագործական ընկերության արտադրության «ԴիաՄար-Մ, մետֆորմին (մետֆորմինի հիդրոքլորիդ), գլիմեպիրիդ, դեղահատեր, 500մգ+2մգ; (100/10x10/) բլիստերում», «ԴիաՄետ Ֆ, մետֆորմին (մետֆորմինի հիդրոքլորիդ), դեղահատեր թաղանթապատ, 1000մգ; (100/10x10/) և (150/15x10/) բլիստերում» և «ԴիաԶոն-ՄՌ

60մգ, գլիկլազիդ, դեղահատեր կարգավորվող ձերբազատմամբ, 60մգ; (100/10x10/) բլիստերում» դեղերի գրանցումը Հայաստանի Հանրապետությունում կասեցնելու մասին համապատասխան նշում կատարելը:

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

28.07.2020

X

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360